

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Գավառի պետական համալսարանի հեռակա ուսուցման ֆակուլտետի 2014 թվականի օգոստոսի 26-ի խորհրդի նիստի

Օրակարգում

1. 2014 թվականի ԳՊՀ հեռակա ուսուցման ֆակուլտետի ընդունելության ընթացքի մասին:
2. 2014 թվականի ուստարվա երկրորդ կիսամյակի հեռակա ուսուցման ֆակուլտետի առաջին և երկրորդ կուրսերում սովորող ուսանողների սուգարքների և քննությունների կազմակերման հարցը:
3. 2014 թվականի ուստարվա երկրորդ կիսամյակի հեռակա ուսուցման ֆակուլտետի լուծարային շրջանի կազմակերպման մասին:
4. Հեռակա ուսուցման ֆակուլտետում 2015 թվականի ուսումնական տարվա առաջին կիսամյակի նախապատրաստական աշխատանքների մասին:
5. Ընթացիկ հարցեր:

Նիստին մասնակցում էին խորհրդի բոլոր անդամները:

Լսեցին-2014 թվականի հեռակա ուսուցման ֆակուլտետի ընդունելության ընթացքի մասին /զեկուցող՝ Ն. Ա. Կուտուզյան/

Նշվեց, որ 13 մասնագիտությունների գծով 2014 թվականի օգոստոսի 5-ից սեպտեմբերի 20-ը ներառյալ կազմակերպվում է Հեռակա ուսուցման ընդունելություն: Ընդունելությունն ընթացքի մեջ է:

Լսեցին- 2014 թվականի ուստարվա երկրորդ կիսամյակի հեռակա ուսուցման ֆակուլտետի լուծարային շրջանի աշխատանքների կազմակերպման հարցը /զեկուցող՝ Ա.Ե. Համբարձումյան/

Նշվեց, որ դասախոսների հետ համաձայնեցվել և կազմվել է լուծարային շրջանի ժամանակացույցը, այն տեղադրվել է GSU.am կայքում և քննությունները պետք է կազմակերպել ըստ այդ ժամանակացույցի: Լուծարային շրջանը կազմակերպվելու է սեպտեմբերի 5-ից 14-ը:

Լսեցին-2014 թվականի ուստարվա երկրորդ կիսամյակի հեռակա ուսուցման ֆակուլտետի առաջին և երկրորդ կուրսերում սովորող ուսանողների սուգարքների և քննությունների կազմակերման հարցը /զեկուցող՝ Ա.Ե. Համբարձումյան/

Նշվեց, որ դասախոսների հետ համաձայնեցվել և կազմվել է սուգարքների և քննությունների ժամանակացույցը, և սուգարքները պետք է կազմակերպել սեպտեմբերի 6-15-ը, իսկ քննությունները՝ սեպտեմբերի 17-ից հոկտեմբերի 5-ը՝ ըստ ժամանակացույցի:

Լսեցին – Հեռակա ուսուցման ֆակուլտետում 2015 թվականի ուսումնական տարվա առաջին կիսամյակի նախապատրաստական աշխատանքների հարցը /զեկուցող՝ Ն. Ա. Կուտուզյան/:

Քննարկվեցին ուսումնական պլանները:

Որոշեցին – մասնագիտությունների բարելավված ուսումնական պլանները ներկայացնել դասախոսների և արտաքին փորձագետների քննարկման:

Քննարկվեց սոցիալապես անապահով ընտանիքների երեխա-ուսանողների հարցը:

Որոշեցին – կազմել այն ուսանողների ցանկը, որոնց ընտանիքները գտնվում են սոցիալապես անապահով վիճակում և ներկայաքցնել ռեկտորատ՝ նյութական օժանդակության նպատակով:

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի խորհրդի նախագահ՝

Ն. Ա. Կուտուզյան

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի խորհրդի քարտուղար՝

Վ. Դ. Խաչատրյան